ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

12 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 6 անդամներ:

Բացակա էին՝ Թաթուլ Դումանյանը, Հարություն Համազասպյանը, Նորայր Մելքումյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Ռոբերտ Օհանյան, Սիրաք Ռաֆայելյան, Արտակ Ստեփանյան, Սերյոժա Ավալյան, Հակոբ Մարտիրոսյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 12.11.2019 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով.

Հաստատել համայնքի ավագանու՝ 12.11.2019թ. թիվ 8 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ, ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ /ՏԵՂԱԴՐՄԱՆ/ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

3. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ/ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

4. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

5. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

6. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

7. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

8. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

9. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.0 ՀԱ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

10. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 21/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.065528 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

11. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 21/39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0069 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

12. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0817 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

13. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0441 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
14. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0469 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
15. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0561 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
16. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
17. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
18. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
19. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
20. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
21. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,004 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ԱՐԱՄՅՆԱՅԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
22. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
23. ԱՆՀԱՅՏ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
24. ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
25. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/
26. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԼԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 3/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19274 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ՀԵԿ. Վ. ԱԴԱՄՅԱՆ/

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75/

Լսեցին
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ, ԿԱՄ

ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ԾԱՎԱԼԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Ճամբարակ համայնքի սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ, կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման պայմանները և իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ /ՏԵՂԱԴՐՄԱՆ/ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ կանոնները՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել Ճամբարակ համայնքի տարածքում արտաքին գովազդի տեղաբաշխման /տեղադրման/ չափորոշիչները համաձայն հավելված 2-ի:
3. Սուն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ /ԿԱՄ/ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 13,14 հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6,7 և 8-րդ հոդվածներով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել «Համայնքում հանրային բաց լսումների և /կամ/ քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78/

Լսեցին

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-ից 14 հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենիք 6,7 և 8-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետով, ՀՀ Կառավարության 2014 թվականի Նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» N1325-Ն որոշմամբ.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79/

Լսեցին
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Ճամբարակ համայնքի ղեեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80/

Լսեցին
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենիքի 11-րդ հոդվածի 1-ին կետի «գ» ենթակետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման» Ճամբարակի տարածքային բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81/

Լսեցին
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Ճամբարակ համայնքի Քաղաքաշինական կանոնադրությունը համաձայն հավելված 1-ի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող տասերորդ օրը:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82/

Լսեցին
ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենքի 216-րդ և 219ı-րդ հոդվածներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կազմավորել Ճամբարակի համայնքապետարանին առընթեր վարչական իրավախախտումների գործերը քննող հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը.
2. Ադամյան Վազգեն-հանձնաժողովի նախագահ /համայնքի ղեկավար/
3. Ստեփանյան Արտակ-հանձնաժողովի անդամ /աշխատակազմի քարտուղար/
4. Օհանյան Ռոբերտ-հանձնաժողովի անդամ /համայնքի ղեկավարի տեղակալ/
5. Ավալյան Սերյոժա-հանձնաժողովի անդամ /քաղաքին բաժնի պետ/
6. Մարտիրոսյան Հակոբ-հանձնաժողովի անդամ /ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ/
7. Սարիբեկյան Վարդան-հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ/
8. Ադամյան Գևորգ-հանձնաժողովի անդամ /ավագանու անդամ/
9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 3.0 ՀԱ 4-ՐԴ ԿԱՐԳԻ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Մարտունի բնակավայրի 05-063-0234-0036 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 3.0 հա 4-րդ կարգի արոտավայրը տրամադրել վարձակալական մրցույթով: Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 5810 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 21/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.065528 ՀԱ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Ազատամարտիկների փողոց 21/1 հասցեի 05-002-0134-0004 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն հանդիսացող 0.065528 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական հողատարածքը օտարել աճուրդ-վաճառքի կարգով: Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 145.480 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85/

Լսեցին

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Գ. ՆԺԴԵՀԻ ՓՈՂՈՑ 21/39 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.0069 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ավագանում 01.11.2019 թվականի N314 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի Գ.Նժդեհի 21/39 հասցեի 05-002-0115-0019 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն հանդիսացող 0.0069 հա բնակավայրի՝ հասարակական կառուցապատման հողատարածքը օտարել աճուրդ-վաճառքի կարգով: Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 15.320 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0817 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N 315 որոշումը.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ձորավանք բնակավայրի 05-061-0112-0048 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 0.0817 հա 3-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալական մրցույթով: Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 7930 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87/

Լսեցին

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0441 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N316 որոշումը.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ձորավանք բնակավայրի 05-061-112-50 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 0.0441 հա 3-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալական մրցույթով : Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 4280 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0469 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N 317 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ձորավանք բնակավայրի 05-061-111-61 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 0.0469 հա 3-րդ կարգի վարելահողը տրամադրել վարձակալական մրցույթով: Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 4551 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89/

Լսեցին
ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՁՈՐԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0561 ՀԱ 3-ՐԴ ԿԱՐԳԻ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18 հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N318 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Ձորավանք բնակավայրի 05-061-112-12 կադաստրային ծածկագրով գտնվող գյուղնշանակության 0.0561 հա 3-րդ կարգի

վարելահողը տրամադրել վարձակալական մրցույթով : Հողամասի համար մեկնարկային գին սահմանել 5450 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Կառավարության 2001 թվականի N286-Ն որոշմամբ 46,2-կետի «բ» ենթակետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արման Սևանյանին նախկինում կառուցապատման իրավունքով տրամադրված 0,0228 հա հողամասում իրականացվող շինարարության համար որպես սպասարկման /ջրահեռացման կառուցատարրեր/ տարածք տրամադրել կից գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքից 0,014 հա չափով:
2. Որպես տարեկան վճար սահմանել 40,000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 91/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և քանի որ նշված շենք շինությունները չունեն սեփականատերեր.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Նշված շենք-շինությունները ճանաչել որպես համայնքային սեփականություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92/

Լսեցին
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ մասի պահանջները և «Գույքահարկի մասին» օրենքի՝ 01.01.2003 թվականի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով Ճամբարակ համայնքի բնակիչ Վարդան Հակոբյանի դիմումը այն մասին, որ իր անունով հաշվառված է GAZ 24-03 մակնիշի ավտոմեքենա, որը տարիներ շարունակ գտնվում է անսարք վիճակում: 2015-2019թթ. կուտակվել է 62613 հազ. դր. (վաթսուներկու հազար վեց հարյուր տասներեք դրամ) գույքահարկի պարտք, որից 47387 հազ. դրամը (քառասունյոթ հազար երեք հարյուր ութսունյոթ) մայր գումար է, իսկ 15226 հազ. (տասնհինգ հազար երկու հարյուր քսանվեց) դրամը՝ տույժ: Նա մուծել է մայր գումարը, և սոցիալական խնդիրներից ելնելով՝ խնդրում է օրենքի սահմանում արտոնել գույքահարկի մասով տույժը:
2. Սահմանված կարգով դուրս գրել պարտքը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93/

Լսեցին
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ մասի պահանջները և «Գույքահարկի մասին» օրենքի՝ 01.01.2003 թվականի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաշվի առնելով Ճամբարակ համայնքի բնակիչ Վահե Ավագյանի դիմումը այն մասին, որ իր անունով հաշվառված է GAZ 24 ավտոմեքենա, որի փաստաթղթերը համարների հետ 2013թ.-ին հանձնել է ճանապարհային ոստիկանություն, փոխարենը պետք է խոտաներ: 2013-2019թթ. կուտակվել է 67171դր. (վաթսունյոթ հազար երկու հարյուր ութսուն դրամ) գույքահարկի պարտք, որից 49700 դրամը (քառասունինը հազար յոթ հարյուր) մայր գումար է, իսկ 17471 (տասնյոթ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) դրամը՝ տույժ: Նա մուծել է մայր գումարը, և սոցիալական խնդիրներից ելնելով՝ խնդրում է օրենքի սահմանում արտոնել գույքահարկի մասով 17471 (տասնյոթ հազար չորս հարյուր յոթանասունմեկ) դրամ տույժը:
2. Սահմանված կարգով դուրս գրել պարտքը:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվի առնելով, որ Ճամբարակ համայնքի բնակչուհի Մաքրուհի Ավալյանը ունի մանկուց հաշմանդամ երեխա, ինքը հաշմանդամ է միայնակ մայր է և տունը գտնվում է ծայրաստիճան վատ վիճակում, տրամադրել 150,000 /մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տան մասնակի վերանորոգման համար:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95/

Լսեցին
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,004 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԼԵՎՈՆ ԱՐԱՄՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՀԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 62-րդ հոդվածի 3-ի մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և

հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N 319 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող Տ. Մեծի փողոց 15/3 շինություն հասցեում գտնվող 05-002-0101-0095 ծածկագրով 0,004 հա մակերեսով հողամասը ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Լևոն Աշոտի Արամյանին, քանի որ նշված հողամասի վրա կառուցված է Լևոն Արամյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակը /սեփականության վկայականի համարը՝ 2126484 տրված 23.05.2006 թվականին/:
2. Վաճառքի գինը սահմանել 9000 /իններ հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 18-կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N 312 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի ղեկավարի կողմից առաջարկված համայնքի սեփականություն հանդիսացող գույքը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով.
   1) Լեոյի փողոց 11/4, մեկնարկային գինը 446,560 դրամ
   2) Զ. Անդրանիկի փողոց 27/1, մեկնարկային գինը 1,682,344 դրամ
   3) Լեոյի փողոց 1/5, մեկնարկային գինը 315,192 դրամ
   4) Գ. Նժդեհի փողոց 101/, մեկնարկային գինը 1,727,874 դրամ
   5) Լեոյի փողոց 1/4, մեկնարկային գինը 315,192 դրամ
   6) Լեոյի փողոց 1/7, մեկնարկային գինը 306,187 դրամ
   7) Տ. Մեծի փողոց 9/53, մեկնարկային գինը 444,154 դրամ
   8) Լեոյի փողոց 1/43, մեկնարկային գինը 306,187 դրամ
   9) Տ. Մեծի փողոց 13/48, մեկնարկային գինը 403,341 դրամ
   10) Տ. Մեծի փողոց 13/50, մեկնարկային գինը 440,739 դրամ
   11) Տ. Մեծի փողոց 10/13, մեկնարկային գինը 399,619 դրամ

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97/

Լսեցին
ԱՆՀԱՅՏ ՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 01.11.2019 թվականի N320 որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջարկած 1,8042 հա 05-002-0295-0195 կադաստրային ծածկագրով անհայտ հողը /խոտհարքը/ ճանաչել որպես համայնքային սեփականություն:
2. Սույ որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98/

Լսեցին
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Դպրաբակ բնակավայրի բնակիչ Արսեն Ինանցի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակը որն այնուհետև դարձել է համայնքային սեփականություն /ծածկագիր 05-031-0026-0004/ ուղղակի վաճառքով վաճառել Ա. Ինանցին:
2. Վճար ընդհանուր սահմանել 124,000 ՀՀ դրամ:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99/

Լսեցին
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարելով ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի վարչական բյուջեի «Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ» եկամտատեսակին ավելացնել 55 813 000(հիսունհինգմիլիոն ութ հարյուր տասներեք հազար) դրամով, իսկ «Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ» եկամտատեսակն ավելացնել 159 123 100(մեկ հարյուր հիսունինը միլիոն մեկ հարյուր քսան երեք հազար մեկ հարյուր) դրամով:
2. 01 բաժնի I խմբի I դասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» դասակարգման հետևյալ հաշիվներից պակասեցնել՝
   • 4212 –Էներգետիկ ծառայություններ – 62 700(վաթսուն երկու հազար յոթ հարյուր) դրամ,
   • 4233 – Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություն-ներ – 200 000(երկու հարյուր հազար) դրամ,
   • 4239 – Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ- 600 000(վեց հարյուր հազար) դրամ,
   • 4264 – Տրանսպորտային նյութեր – 493 000(չորս հարյուր ինը-սուն երեք հազար) դրամ,
   • 4267 – Կենցաղային և հանրային սննդի նյութեր – 250 000(երկու հարյուր հիսուն հազար) դրամ,
   • 4861 – Այլ ծախսեր – 200 000(երկու հարյուր հազար) դրամ
3. 01 բաժնի VI խմբի I դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» դասա¬կարգման հաշիվներից պակասեցնել՝
   • 4819 – Նվիրատվություններ «Այլ շահույթ չհետապնդող կազմա-կերպութ¬յուններ»-ին – 1 000 000(մեկ միլիոն) դրամ,
   • 4823 – Պարտադիր վճարներ – 150 000(մեկ հարյուր հիսուն հազար) դրամ,
4. 04 բաժնի II խմբի I դասի «Գյուղատնտեսություն» դասակարգման հաշիվներից պակասեցնել՝
   • 4251 – Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում – 908 000(ինը հարյուր ութ հազար) դրամ,
   • 4264 – Տրանսպորտային նյութեր – 714 000(յոթ հարյուրն տասնչորս հազար) դրամ,
   • 4269 – Հատուկ նպատակային նյութեր – 500 000(հինգ հարյուր հազար) դրամ,
5. 05 բաժնի I խմբի I դասի «Աղբահանություն և սանիտարական մաքրում» դասա կարգման հաշիվներից պակասեցնել՝
   • 4264 – Տրանսպորտային նյութեր – 2 800 000(երկու միլիոն ութ հարյուր հազար)

դրամ,

• 4267 – Կենցաղային և հանրային սննդի նյութեր – 200 000(երկու հարյուր հազար) դրամ,

6. 05 բաժնի VI խմբի I դասի «Թափառող կենդանիների վնասազերծում» դասա-կարգման հետևյալ հաշիվներից պակասեցնել՝

• 4823 – Պարտադիր վճարներ – 300 000(երեք հարյուր հազար) դրամ,

7. 08 բաժնի I խմբի I դասի «Սպորտային միջոցառումներ» դասակարգման 4269 «Հատուկ նպատակային նյութեր» հաշվից պակասեցնել - 55 000(հիսուն հինգ հազար) դրամ,
8. 09 բաժնի I խմբի I դասի «Նախադպրոցական դաստիարակություն» դասակարգ¬ման 4269 «Հատուկ նպատակային նյութեր» հաշվից պակասեցնել - 598 000(հինգ հարյուր ինըսուն ութ հազար) դրամ,
9. 09 բաժնի I խմբի II դասի «Հանրակրթական ուսուցում» դասակարգման 4269 «Հատուկ նպատակային նյութեր» հաշվից պակասեցնել - 20 000(քսան հազար) դրամ,
10. 06 բաժնի III խմբի I դասի «Ջրամատակարարում» դասակարգման հետևյալ հաշիվներից պակասեցնել՝

• 4251 – շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում 800 000(ութ հարյուր հազար) դրամ, • 4264 տրանսպորտային նյութեր – 900 000(ինը հարյուր հազար) դրամ,

• 4269–հատուկ նպատակային նյութեր–400 000(չորս հարյուր հազար) դրամ,

• 4819 – նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպութ յուններին–3 500 000(երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ,

11. 09 բաժնի IV խմբի I դասի «Բարձրագույն մասնագիտական կրթություն» դասա-կարգման 4729 «Այլ նպաստներ բյուջեից» հաշվից պակասեցնել – 1 000 000(մեկ միլիոն) դրամ:

ՊԱԿԱՍԵՑՐԱԾ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԲԱՇԽԵԼ՝

12. 01 բաժնի I խմբի I դասի «Օրենսդիր և գործադիր մարմիններ» դասակարգման հետևյալ հաշիվների վրա՝

• 4215 – ապահովագրական ծախսեր–60 000(վաթսուն հազար) դրամ,

• 4234 – Տեղեկատվական ծառայություններ – 50 000(հիսուն հազար) դրամ,

• 4252 – մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում–400 000(չորս հարյուր հազար) դրամ,

• 5113 – շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում–6 471 000 (վեց միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար) դրամ,

13. 01 բաժնի VI խմբի I դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն» դասա-կարգման 4264 «Տրանսպորտային նյութեր» հաշվին–2 000 000(երկու միլիոն) դրամ, իսկ 4241 «Մասնագիտական ծառայություններ» հաշվին – 100 000(մեկ արյուր հազար) դրամ,
14. 04 բաժնի II խմբի I դասի «Գյուղատնտեսություն» դասակարգման 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հաշվին ավելացնել–34 560 000(երեսունչորս միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) դրամ, իսկ 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հաշվին ավելացնել–400 000(չորս հարյուր հազար) դրամ,
15. 04 բաժնի V խմբի I դասի «Ճանապարհային տրանսպորտ» դասակարգման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հաշվին ավելացնել–150 000(մեկ հարյուր հիսուն հազար) դրամ, իսկ 4251 «Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հաշվին–900 000(ինը հարյուր հազար)դրամ, իսկ 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հաշվին – 116 790 000(մեկ հարյուր տասնվեց միլիոն յոթ հարյուր ինըսուն հազար)դրամ,

16. 05 բաժնի I խմբի I դասի «Աղբահանում» դասակարգման 4111–«Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հաշվին ավելացնել–500 000(հինգ հար-յուր հազար) դրամ:
17. 09 բաժնի I խմբի I դասի «Տարրական ուսուցում» դասակարգման 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հաշվին ավելացնել–300 000(երեք հարյուր հազար) դրամ:
18. 06 բաժնի III խմբի I դասի «Ջրամատակարարում» դասակարգման 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հաշվին ավելացնել–62 740 600(վաթսուն երկու միլիոն յոթ հարյուր քառասուն հազար վեց հարյուր) դրամ:
19. 08 բաժնի I խմբի I դասի «Սպորտային միջոցառումներ» դասակարգման 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հաշվին ավելացնել–14 614 000(տասնչորս միլիոն վեց հարյուր տասնչոր հազար) դրամ:
20. 06 բաժնի IV խմբի I դասի «Փողոցների լուսավորում» 4212 հաշվին ավելացնել–1 500 000(մեկ միլիոն հինգ հարյուր հազար), իսկ 5113 «Շենքերի և շինություն-ներիկապիտալ վերանորոգում–3 500 000(երեք միլիոն հինգ հարյուր հազար) դրամ:
21. 08 բաժնի II խմբի IV դասի «Այլ մշակույթային կազմակերպություններին» դասակարգման 4239 «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հաշվին ավելացնել 300 000(երեք հարյուր հազար) դրամ,
22. 11 բաժնի I խմբի II դասի «Պահուստային ֆոնդ» դասակարգման 4891 «Պահուստային միջոցներ» հաշիվն ավելացնել – 6 371 100(վեց միլիոն երեք հարյուր յոթանասուն մեկ հազար մեկ հարյուր) դրամ,
23. Վարչական բյուջեից ֆոնդային բյուջե հատկացնել–58 432 600(հիսունութ միլիոն չորս հարյուր երեսուն երկու հազար վեց հարյուր) դրամ:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100/

Լսեցին

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԼԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 9-ՐԴ ՓՈՂՈՑ 3/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.19274 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ «Հողային օրենսգրքի» 76-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերով և 4-րդ մասի 1-ին կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնություն տալ Ճամբարակ համայնքի Կալավան բնակավայրի 9-րդ փողոց 3/2 հասցեի 05-053-0118-0008 կադաստրային ծածկագրով համայնքի սեփականություն հանդիսացող 0.19274 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողատարածքը օտարել ուղղակի վաճառքով: Հողամասի համար ուղղակի վաճառքի գին սահմանել 185.030 ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-6 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101/

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ՎԱԽԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՄԱԿԻՉ ԽՈՆԴԿԱՐՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԶՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը